



## ՃԱՆՉՑԻՐ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԴ

Ժամանակին անձնական պարտեզի մը մէջ մրջին մը կ'ապրէր: Այս մրջինը համոզում մը ուներ, թէ ինք անօգուտ եւ անարժէք է: Զանի որ աշխարհի վրայ միլիառաւոր մրջիններ կային, այսինքն՝ մարդոցմէ շահ տալի, այդ պատճառով ալ այս մրջինը ինքզինք աննկատ ու փոքր կը նկատէր: Միայն մէկ պարագայի զինք կը նկատէին, ան ալ երբ խածներ ուրիշներուն: Իրականութեան մէջ չէր ուզէր այս ձեւով նկատելի դառնալ, ան կ'ուզէր օգտակար բան մը ընել միջավայրին մէջ: Բայց ի՞նչ ընէր: Ի՞նչ կրնար ընել:

Օր մըն ալ, երբ մրջինը սովորականին պէս գործի կը մեկնէր, պարտեզին մէջ ձայն մը լսեց: Տեսաւ որ պարտեզին տերը դժգոհութեամբ իր կնոջ ցոյց կու տար ցանկապատին կողմը, ուր մեծ այծ մը մտած բանջարեղէները կ'ուտէր: Տերը իր ձայնը բարձրացուց եւ փորձեց հեռացնել այծը, սակայն ան մերժեց եւ շարունակեց ուտել: Մարդը դիմեց պարտեզի հպարտ աքլորին, որպէսզի օգնէ իրեն հեռացնելու այծը, սակայն անօգուտ:

Մարդն ու կինը այս անգամ դիմեցին պարտեզի շան, որ բաւական վարպետ էր ոչխարներ եւ այծեր գտնելու մէջ, այս գործն ալ իրեն համար դուրսի պիտի ըլլար: Շունը իր սուր ականները ցոյց տալով ու բարձրաձայն հաչելով փորձեց վախցնել այծը, սակայն անօգուտ: Այծը շարունակեց բանջարեղէնը ուտել:

Մարդը չափազանց կը տխրէր տեսնելով, որ իր ցանած բանջարեղէնը կը փճանան: Ան պետք ուներ լուրջ օգնութեան: Այս անգամ դիմեց ցուլին,



որ ոտքերը գետին քսելով փորձեց վախցնել յամառ այծը, սակայն դարձեալ անօգուտ, որովհետեւ հազիւ այծը փորձեց մօտենալ անոր, ցուլը սկսաւ կամաց-կամաց ետ քաշուիլ ու փախաւ:

Մարդն ու կինը միևնուճար ու տխուր մտածեցին ճար մը գտնելու եւ փրկելու մնացած բանջարեղէները: Յանկարծ ձայն մը լսեցին:

- Կրնամ ձեզի օգտակար դառնալ:

Սկիզբը անոնք չհասկցան, թէ ձայնը ուրկէ՞ լսուեցաւ, բայց երբ գետին նայեցան, տեսան, որ շահ փոքր մրջին մըն էր իրենց հետ խօսողը: Անոնք քմծիծաղով պատասխանեցին.

- Դո՞ւն պիտի օգնես: Եթէ մեծ կենդանիները, ինչպէս՝ շունը, ցուլը չկրցան օգնել, դո՞ւն պիտի օգնես:

- Հաւանաբար ես բան մը ընեմ, որ իրենք չեն կրնար, այնպէս ինչպէս իրենք ալ կարենան ընել բաներ, որոնք ես չեմ կրնար ընել: Այլ խօսքով՝ կարելոր չէ ըլլալ մեծ, հզօր կամ զօրաւոր ծառայելու համար: Բաւարար է լաւապէս կատարել այն բաները, որոնք կրնանք կատարել:

Մարդը չէր գիտեր ի՞նչ ընէր, բանջարեղէնը կը փճանար: Ան յուսահատ ըսաւ մրջինին.

- Մենք ամէն ինչ փորձեցինք ու ջնջողեցանք: Եթէ դուն ալ կ'ուզես փորձել, հարց չկայ:


Մրջինը պատասխանեց.

- Երբ կը զգաս թէ ամէն ինչ փորձած ես, այն ժամանակ պետք է նորութեան մը մասին մտածես:


Ապա մրջինը սկսաւ ուղղուիլ այծին կողմը, ու որովհետեւ շահ փոքր էր, այծը զինք չնկատեց: Ան շատ մօտեցաւ ու վերջապէս հասաւ: Սկսաւ այծին ոտքերէն մագլցիլ, հասաւ գլխուն ու մտաւ ականջին մէջ ու ամբօրէն խածաւ զինք: Այծը ցաւէն սկսաւ ցատկոտել ու վազել եւ վերջապէս փախաւ, որոշելով անգամ մըն ալ չվերադառնալ այս պարտեզը:

Մրջինը շատ ուրախ էր, որովհետեւ կրցած էր կատարել այն, ինչ որ ուրիշ կենդանիներ չէին կրցած կատարել: Մարդն ու կինն ալ շնորկահալուօրիւն յայտնեցին իրեն եւ այնուհետեւ որոշեցին զգոյշ ըլլալ եւ պարտեզին մէջ գտնուող մրջինները ոտնակոխ չընել:


ԹԻՒՆ ԴԱՏԱՏՈՒՄԻ ԴԱՐՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՑՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԻ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՇԵՆՆԵՐԴ




Գտի՛ր երկու նոյնանման ձեւերը:



Թիւերուն հետեւելով, եկէ՛ք թուղթի մը վրայ միասին փորձենք գծել այս թիթեռնիկը:



Կրնա՞ս լուծել հետեւեալ սուտորուն:



:դուրիոտա՞ս:

# ՓՈՔՐԻԿ ՅԱԿԻԿԸ

Կար ու չկար շէկ հաւիկ մը կար, ուներ վեց չարաճճի ճուտիկներ: Անոնք ագարակի մը հաւնոցին մէջ կ'ապրէին: Շէկ հաւիկը ամէն օր տունտեղ կը հոգար եւ միշտ կը կերակրէր իր ձագուկները: Ան կը զբաղէր նաեւ անոնց չարաճճիութիւններով:

Առտու մը, երբ հողը կը փորփրէր որդ գտնելու համար, որպէսզի կերակրէ ձագուկները, ափ մը ցորենի սերմ տեսաւ հողին մէջ:

- Այս սերմերը կրնաս ցանել,- ըսաւ խոզը, երբ անգործ կը պառկէր խոզանոցին մէջ:

- Յետոյ ալիւրի կը վերածես,- ըսաւ կատուն, երբ արեւուն ճառագայթները կը վայելէր իր հանգիստ կողովին մէջ:

- Եւ յետոյ այդ ալիւրով համեղ հաց կ'եփես,- ըսաւ բաղը, երբ աննպատակ կը պտըտէր աւազանին մէջ:

- Շատ լա՛ւ գաղափար,- ըսաւ շէկ հաւիկը: Յաւաքեց ցորենի սերմերը ու ձայնեց ագարակի ընկերներուն:

- Ո՞վ կ'օգնէ ինձի հունտերը ցանելու:

- Ես, չէ՛,- ըսաւ խոզը:

- Ես, չէ՛,- ըսաւ կատուն:

- Ես, չէ՛,- ըսաւ բաղը:

Ուստի շէկ հաւիկը՝ ինք ցանեց սերմերը: Ամառը ցորենի հասկերը բուսան: ճուտիկներն ալ հետզհետէ մեծցան: Շէկ հաւիկը երբեք պարապ ժամանակ չէր ունենար:

- Ո՞վ կ'օգնէ ինձի ցորենը հնձելու համար,- հարցուց շէկ հաւիկը:

- Ես, չէ՛,- ըսաւ խոզը:

- Ես, չէ՛,- ըսաւ կատուն:

- Ես, չէ՛,- ըսաւ բաղը:

- Ուրեմն, ես ընեմ,- ըսաւ շէկ հաւիկը, եւ հնձեց ցորենի հասկերը: Այդ պահուն ճուտիկներն ալ ուրախութեամբ կը խաղային յարդերուն վրայ:

Սակայն ցորենի հատիկները առանց աղալու կարելի չէր ալիւրի վերածել: Շէկ հաւիկը չարաճճի ճուտիկները քնացնելէ ետք հարցուց.

- Ո՞վ կ'օգնէ ինձի ցորենի հատիկները հասկերէն բաժնելու գործողութեան մէջ:

- Ես, չէ՛,- ըսաւ խոզը:

- Ես, չէ՛,- ըսաւ կատուն:

- Ես, չէ՛,- ըսաւ բաղը:

- Ուրեմն, պարտաւոր եմ ընել,- ըսաւ յօրանջելով:

Եւ գաւազանով մը թօթուեց հասկերը, մինչեւ որ բոլոր հատիկները ինկան:

*(Շարունակելի)*



## ԱՆՈՒՇԵՂԵՆ, ՏՈՒՐՄ ԵՒ ԽՄՈՐԵՂԵՆ

Անուշեղենը, տուրմը եւ խմորեղենը բարձր ջերմութ պարունակող սնունդներ են: Տուրմը ամենէն շատ ջերմութը ունի, անոր համար է, որ բազմաթիւ մարզիկներ տուրմ կ'ուտեն, երբ երկար ժամանակ վազքի ելլեն:

### ՇԱՔԱՐ

Շաքարը իր բնական վիճակին մէջ կը գտնուի գրեթէ բոլոր բոյսերուն մէջ (ճակնդեղ, պտուղներ...): Մեր գործածած փոշի շաքարը ընդհանրապէս շաքարեղէգէն կը ստանանք:

Չուտ շաքար ունենալու համար, սրճագոյն շաքարը կը լուացուի եւ քիմիականօրէն կը ճերմկցուի:

### ԽՄՈՐԵՂԵՆ

Խմորեղենը կը պատրաստուի ջուրով հետ խառնուած ալիւրով:

### ՏՈՒՐՄ

Քաքառի ծառը կը բուսնի Հարավային Ամերիկայի եւ Ափրիկէի մէջ: Տուրմը կը պատրաստուի քաքառով, որ պտուղին հատիկներէն դուրս կու գայ: Հունձքէն ետք, հատիկները կը մանրուին, կը խառնուին շաքարի, իւղի եւ կաթի:

